

**ԳԻՍԱԻՈՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՆՈՐԱՅԱՅՑ
ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ
ՄԱՏԵՆԱԳԻՐ ԱՂԲԻՐՆԵՐՈՒՄ**

Հայկական միջնադարեան աղբիւրներում պահպանուած են բազմաթիւ յիշատակութիւններ տարբեր աստղագիտական երեւոյթների (Արեւի, կամ Լուսնի խաւարումների, գիսաւորների յայտնուելու, նոր եւ գերնոր աստղերի ընկուումների եւ այլնի) մասին: Այդ յիշատակութիւնները հիմնականում մանրամասն հետազոտուած եւ հրատարակուած են¹: Այդուհանդերձ, այդ յիշատակութիւնների ի յայտ բերումն ու հետազոտումը աւարտուած համարել կարելի չէ: Առկայ են աստղագիտական երեւոյթներին վերաբերող տակաւին չհետազոտուած յիշատակութիւններ հայ միջնադարեան մատենագիր աղբիւրներում, մինչեւ իսկ՝ շատ յայտնի եւ համեմատաբար լաւ ուսումնասիրուած հայ հեղինակների երկերում:

Ա. Այդպիսի մի օրինակ է Անանիա Շիրակունու անուամբ հրատարակուած պատմութեան մէջ առկայ յիշատակութիւնը Փրկչ. 467 թ. գիսաւորի մասին: Ահա այդ տեղին. «Ղեւովն Մեծ ամս ԺԹ(19) ... ի նորին Թ(9)երորդ ամին նշան երեւեցաւ յերկինս, սիւն ամպոյ փողոյ նմանութեամբ երեւալ յաւուրս իս(40)»²:

¹ Տե՛ս Բ. Ե. ԹՈՒՄԱՆԵԱՆ, Հայ աստղագիտութեան պատմութիւն (XIX դ. սկզբից մինչև 1920 թ.), «Միտհ», Երեւան, 1968, էջ 120-243, Բ. Ե. ԹՈՒՄԱՆԵԱՆ, Բանբեր Երեւանի Համալսարանի, 1(10), 1970, էջ 212-217, Ս. Կ. Всехсвятский, Б. Е. Туманян, Ученые записки ЕРГУ, Естественные науки, 3, 1970, ст. 52-71, Г. А. Брутян, Сообщения Биораканской обсерватории, LX, 1989, ст. 138-144, А. Ж. Барсегян, Р. А. Епремян, Э. С. Парсамян, Доклады Национальной Академии Наук Армении, т. 103, № 2, 2003, ст. 126-130.

² Մաշտոցեան Մատենադարան, ձեռ. 2679, էջ 65բ, նոյնը՝ Մատեն գիտութեան և հաւատոյ Դաւթի Բահանայի, նմանահանութիւն, աշխատասիր.

Խնդրոյ առարկայ պատմութիւնը մեզ է հասել Մաշտոցեան Մատենադարանի (Մ.Մ.) թիւ 2679 ձեռագրում (էջ 29ա-71ր): Այս նոյնը հէնց միեւնոյն ձեռագրի հիման վրայ հրատարակուած է Անանիա Շիրակունու մատենագրութեան մէջ³: Նշենք, որ այս պատմութիւնը ունեցել է բազմաթիւ հրատարակութիւններ՝ իբր անանուն պատմագրի երկ. կամ Անանիա Շիրակունու հեղինակած երկ: Բազմաթիւ են նաեւ այս պատմութեանը վերաբերող հետազոտութիւնները: Հիմնականում խնդրայարոյց է եղել այս երկի հեղինակային պատկանելութիւնը: Անվերապահօրէն Անանիային վերագրուելուց զատ այն համարուել է նաեւ Անանիայի կողմից կատարուած բանաբաղութիւն այլոց երկերից, վերագրուել է նաեւ Փիրոն Տիրակացուն, համարուել է անանուն հեղինակի երկ⁴: Իսկ այս երկի վերջին հետազոտող Արտ. Մաթեւոսեանն էլ համարել է, որ այն ստեղծել է հայերէն հնագոյն թղթեայ ձեռագրի ստեղծող Դաւիթ քահանան⁵:

Չվիճարկելով խնդրոյ առարկայ պատմութեան հեղինակային պատկանելութեան մասին նախորդ հետազոտողների եզրակացութիւնները արժանահաւատութիւնը, փորձենք տեսնել, թէ ինչ երկնային երեւոյթի է վերաբերում պատմութեան վերորբերեալ հատուածում նշուածը:

Նախ նշենք, որ այս նոյնի մասին տեղեկութիւն կայ նաեւ Մխրիթար Այրիվանեցու Պատմութեան մէջ: Քաղկեդոնի ժողովին

ԱՐՏ. ՄԱԹԵՒՈՍԵԱՆ, էջ 65ր, «Նաիրի», Երեւան, 1995, նաեւ՝ նոյնի նմանապոյթիւնը, «Նաիրի», Երեւան, 1997:

³ Անանիայի Շիրակայնոյ համարողի մատենագրութիւնը, աշխատասիր. Ա.Շ. ԱՐՐԱՀԱՄԵԱՆ, ՀՍՍՌ Մատենադարանի հրատ., Երեւան, 1944, էջ 357-399: Ի դէպ, ձեռագրագէտ Արտաշէս Մաթեւոսեանը, մանրամասն համեմատելով հրատարակուածը ձեռագրի հետ, եզրակացնում է, որ հրատարակուածը ոչ թէ ուղղակի նշուած ձեռագրից է վերցուած, այլ վեներտիկում պահուող՝ այդ նոյն ձեռագրից արտագրուած ձեռագրի հիման վրայ հրատարակուած օրինակից (տե՛ս ԱՐՏ. ՄԱԹԵՒՈՍԵԱՆ, Անանիա Շիրակացու «Քննիկոնը», Լրաբեր հաս. գիտ., 1974, № 7, էջ 76, նաեւ՝ նոյնի Մատենի գիտութեան եւ հաստոյ, նմանապոյթիւն, էջ 538):

⁴ ՀՐ. ԲԱՐԹԻԿԵԱՆ, Բանբեր Մատենադարանի, 8, 1967, էջ 57-77: Տե՛ս նաեւ անդ եղած մատենագրութիւնը:

⁵ Այս մասին մանրամասն տե՛ս ԱՐՏ. ՄԱԹԵՒՈՍԵԱՆ, Անանիա Շիրակացու «Քննիկոնը», Լրաբեր հաս. գիտ., 1974, № 7, էջ 66-81, նաեւ՝ նոյնի ծանօթագրութիւնը Մատենի գիտութեան եւ հաստոյ, նմանապոյթիւն գրքում, էջ 538):

յաջորդող իրադարձութիւնների շարքում Մ. Այրիվանեցու մօտ կայ. «Մին ամիս օդդ փոշի տեղաց թիզ մի. ի բազում տեղիս հուր վայթեցաւ եւ փողանման ամպ լուսաւոր երևեցաւ զաւուրս քառասուն»⁶: Այստեղ երեւոյթի ժամանակը բաւական անորոշ է տրուած. այն դրուած է Քրիստոսի ծննդեան 452-500 տարիների միջեւ:

Երկնային երեւոյթի նկարագրութիւնից ունենք, որ այն եղել է ամպեղէն, սիւնածեւ, նման է եղել փողի եւ երեւացել է 40 օր՝ Լեւոն Ա Մեծ կայսեր 9-րդ տարում: Սա լիովին համապատասխանում է գիսաւորի նկարագրութեանը: Ուրեմն, ըստ արտաքին տեսքի նկարագրութեան խնդրոյ առարկայ երեւոյթը եղել է գիսաւորի անցում երկնքով: Մնում է պարզել, թէ ե՞րբ է յայտնուել այդ գիսաւորը, եւ նշուած աղբիւրներից զառ ի՞նչ այլ աղբիւրներում կան տեղեկութիւններ դրա մասին:

Լեւոն Ա Մեծ (ընագրում՝ Ղեւովն Մեծ) կայսրը գահակալել է Փ. 457-474 թթ.: Նրա գահակալութեան 9-րդ տարին կը լինի Փ. 465 թ.: Մ. Բայրէի կազմած՝ գիսաւորների համահաւաք ամփոփիչ ցուցակում Փրկչական 465 թ. ռեւէ գիսաւորի երեւալու մասին տեղեկութիւն չկայ⁷: Միւս կողմից ժամանակ, այդ նոյն ցուցակում յիշատակութիւն կայ Փ. 467 թ. գիսաւորի մասին⁸, ընդ որում, որպէս այս տեղեկութեան աղբիւր յղուած է Մ. Պինգրէի աշխատութիւնը: Իսկ Մ. Պինգրէի գիսաւորների ցուցակում էլ Փ. 467 թուականի դիմաց կայ. «Պուֆ էուսի եւ Յովհաննէսի հիւպատոսութեան ժամանակ, ինդիկտիոնի 5-րդին մի քանի օրերի ընթացքում մի մեծ հրաշք է երևացել երկնքում: Ոմանց կողմից դա կոչուել է փող, այլոց կողմից՝ նիզակ եւ վերջապէս ոմանց կողմից էլ՝ փոքրիկ հեծան: Այս գիսաւորը դիտուել է երեկոյեան 40 օրերի ընթացքում. թւալտեւ որոշ տեղերում սրա յայտնուելու տեսողութիւնը սահմանափակուել է 10 օրով»⁹: Հեղինակը այս տեղեկութիւնները

⁶ Միխրարայ Այրիվանեցույ Պատմութիւն Հայոց, ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1860, էջ 47:

⁷ M. F. Baldet, Liste Générale des Comètes de L'Origine à, 1948, annuaire de Bureau de Longitudes, Paris, 1950, p. B24.

⁸ Տե՛ս նոյն տեղում:

⁹ M. Pingré, Cométographie ou Traité historique et théorique des Comètes, v. 1, Paris, 1783, p. 314. Ընագրում. «Sous le consulat de Puféus & de Jean, indiction cinquième, on vit durant quelques jours un grand prodige dans le Ciel: il sut

քաղել է եւրոպական աղբիւրներից: Իրար համադրելով հալկական եւ եւրոպական աղբիւրների տուեալները այս գիտաւորի մասին, ստանում ենք.

	Տեղեկոյթի ընդթիւ	Աղբիւրը	
		հայկական	եւրոպական
1	տեւքը	սիւնի նման	փոքրիկ հեծանի նման
2	տեւքը	փողի նման	փողի նման
3	տեւքը	--	նիզակի նման
4	տեւքը	ամպեղէն, լուսաւոր ամպ	--
5	տելոդուքիւնը	40 օր	40 օր
6	ժամանակը	--	երեկոյեան
7	տարին	Փ. 465 թ.	Փ. 467 թ.

Ակնառու է այս տուեալների բացառիկ նմանութիւնը. աւելին, որոշ տուեալներ պարզապէս համընկնում են: Կարելի է մտածել, որ այս երկու խումբ տուեալների աղբիւրը միեւնոյնն է: Միակ տարբերութիւնը յայտնուելու տարին է: Մ. Պինգրէի բերած տուեալների մէջ գիտաւորի թուականը տրուած է ինդիկ-տիւնի տարիներով: Ինդիկտիւնը 15-ամեայ պարբերաշրջան է, որ սկսուել է ն. Ք. 3 թուականին: Տարուայ ինդիկտիւնը գտնելու կանոնի համաձայն¹⁰ Փ. 465 թիւը ինդիկտիւնի 3-րդ տարին է,

nomme par les uns, la trompette; par les autres, la pique; par d'autres enfin, la petite poutre. Cette Comète fut observée le soir durant quarante jours : en quelques lieux cependant son apparition fut bornée à dix jours».

¹⁰ Ինդիկտիւնի տարին գտնելու համար հարկ է Փրիչ. տարեթուին գումարել 3 եւ ապա ստացուած գումարը բաժանել 15-ի: Քանորդը ցոյց կը տայ ինդիկտիւնի անցած պարբերաշրջանների թիւը, որ տուեալ պարագայում մեզ

իսկ Փ. 467 թուականը իրօք, ինդիկատիոնի 5-րդ տարին է. $467+3=470$; $470=15-31+5$: Ըստ այսմ, Պինդրէի տուած Փ. 467-ը ըստ ինդիկատիոնի լիովին ճիշդ է: Փաստօրէն, միեւնոյն դէպքի համար ունենք ամենայն հաւանականութեամբ միեւնոյն աղբիւրից բղխող երկու տուեալներ իրարից 2 տարով տարբեր՝ Լեւոն Մեծի 9-րդ (Թ) տարին եւ ինդիկատիոնի 5-րդը: Սրանք իրար հետ նոյնացնելու համար հարկ է, որ կամ հայկական աղբիւրում լինէր Լեւոնի 11-րդ (ԺԱ) տարին, կամ էլ եւրոպական աղբիւրներում՝ ինդիկատիոնի 3-րդը: Շատ դժուար է պատկերացնել, որ հայերէն ԺԱ(11)-ը աղաւաղուելով դառնար Թ(9): Ինդիկատիոնի պարագայում եւս իրարից շատ հեռու են յունական կամ լատինական գրութեամբ 3-ն ու 5-ը¹¹: Այսպիսով, գիսաւորի համար մեր ունեցած երկու տարեթուերից ճիշդը գտնելու համար մնում է որոնել տեղեկութիւններ այլ աղբիւրներում:

Գ. Կրոնկի կազմած գիսաւորների ամենանոր համահաւաք ցուցակում այս նոյն իրադարձութեան ժամանակի համար կան տեղեկութիւններ չինական աղբիւրներից: Ըստ Կրոնկի վկայաբերած չինական աղբիւրների Փ. 467 թ. Փետրուարի 6-ին «Ճերմակ գոլորշի» է դիտուել, որ ձգուել է հարաւարեւմուտքից հարաւարեւելք: Սա մեկնաբանուել է իբրեւ գիսաւոր՝ մէկ միջուկով եւ երկու գէտով: Սա դիտուել է երեկոյեան երկնքում¹²: Այստեղ վկայակոչուած է նաեւ Թէոփանէս Խոստովանողի երկը, ըստ որի «այդ տարի երկնքում յայտնուել է նշան՝ մի ամպ շեփոքի ձևով ամէն երեկոյ 40 օրերի ընթացքում», եւ Թէոփանէսը այդ երեկոյթը դրել է Փ. 465-466 թթ.¹³: Թէպէտ տարիները տարբեր են, սակայն չինական եւ եւրոպական աղբիւրների

պէտք է, իսկ մնացորդը կը լինի ինդիկատիոնի պարբերաշրջանում տուեալ տարուայ հերթական համարը՝ այն, ինչ տուեալ պարագայում մեզ հետաքրքրում է: Մանրամասն այս մասին տե՛ս, օր., ԳԷՈՐԳ ԱՐՔԵՊ. ՍԷՐԱՅ-ԴԱՐԵԱՆ, Եկեղեցական տոմարագիտութիւն, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2003, էջ 73-74:

¹¹ Քանի որ մեզ յայտնի է, թէ Մ. Պինդրէի աղբիւրները նախապէս ինչ լեզուով են եղել, մնում է ընդունել երկու հնարաւոր տարբերակներից մէկը՝ կամ յունարէն, եւ կամ լատինարէն: Յունական գրութեամբ 3-ը գրուել է յատուով, իսկ 5-ը՝ Ե-ով: Լատինական գրութեան պարագայում էլ հարկ է III-ը դարձնել V: Երկու դէպքում էլ այս անցումները դժուար պատկերացնելի են:

¹² G. W. Kronk, *Cometography. A Catalog of Comets*, vol. 1, Ancient – 1799, Cambridge University Press, 1999, p. 83-84.

¹³ Անդ, էջ 84:

տուած այս երկու գիսաւորները կրօնկի աշխատութիւնում նոյնացուած են: Այս նոյնացման օգտին կարելի է նկատել եւ այն, որ չինական նկարագրութեան «մէկ գլուխ եւ երկու գէս» ունեցող երեւոյթը իրօք յիշեցնում է եւրոպական ազրիւրների՝ «շեփորի տեսքով» գիսաւորին: Այդպիսի գիսաւորներ, իրօք, պատահում են, երբ գէսի միջին մասը բաւական թոյլ է լինում եւ հնարաւոր է դա ընկալել իրրեւ կրկնակի, երկճիւղ գէս, եւ, քանի որ այդ երկու գէսերը պիտի սկիզբ առնեն միեւնոյն տեղից՝ գիսաւորի գլխից, ապա ընդհանուր պատկերը կը դառնայ հէնց շեփորի նման: Ընդունելով, որ այս բոլոր ազրիւրներում խօսքը միեւնոյն գիսաւորի մասին է, հարկ է ընդունել նաեւ դրանց ժամանակը ըստ չինական ազրիւրների, իրրեւ առաւել ստոյգ եւ արժանահաւատ¹⁴ (առաւել եւս, որ դա համընկնում է վերը բերուած եւրոպական ազրիւրների մի մասի տուեալներին՝ ինչդիպիտին 5-րդ տարուան): Ըստ այսմ, մեր խնդրոյ առարկայ գիսաւորի ժամանակը ճշդւում է. այն պիտի երեւացած լինի Փ. 467 թ. Փետրուարին¹⁵: Հայկական եւ եւրոպական ազրիւրների տուեալներով էլ յստակուում է դրա երեւալու տեւողութիւնը. այն երեւացել է 40 օր:

Բ. Գիսաւորի մասին մի տեղեկութիւն էլ ունենք Վարդան Արեւելցու տիեզերական պատմութեան մէջ: «...պատրիարքին Կոստանդեայ, որ ժառանգեաց զաթոռն սուրբ ... ի վեցհարիւր վաթսուն եւ ինն թուին ... նախ քան զգնուադրիլն նորա միով ամաւ՝ եղև շարժ ահագին, եւ փլաւ պառուկագարդ եկելիցին, որ ի Մշակավանս ի մետասանն յունուարի ի ժամ քաշոյ, եւ չորս պատարագոյ ընդ մեծ գնմանն նուիրեցան: Իսկ ի երկինս տեսալ լինէր ի բոլորից աստղ նիզակածու զամենայն

¹⁴ Չինական ազրիւրների տեղեկութիւնները միւսներից առաւել արժանահաւատ համարելու համար հիմք է այն, որ այդ ազրիւրները տալիս են նաեւ երեւոյթի ճշգրիտ օրը՝ Փետրուարի 6-ը: Սա նշանակում է, որ նրանց տեղեկոյթը առաւել ամրողական է, եւ, ըստ այսմ, հարկ է առաւել արժանահաւատ սեպել նաեւ նրանց տուած տարեթիւր:

¹⁵ Ըստ այսմ, հայկական ազրիւրներում տրուած ժամանակը՝ Փ. 465 թ. պիտի համարել արուարում: Հնարաւոր է այս արուարման պատճառը հայ հեղինակի ունեցած տուեալներն են ոչ թէ գիսաւորի յայտնուելու, այլ Լեւոն կայսեր դահակալութեան տարիների մասին: Ուրեմն, կարելի է մտածել, որ վերորերեալ ժամանակագրութեան կազմողի ունեցած կանոնի համաձայն Լեւոն Մեծ կայսեր դահակալումն սկսուել է ոչ թէ Փ. 457 թ. ինչպէս այսօր ընդունուած է, այլ Փ. 459 թ.:

գիշեր. որք երկոճեան ցոյցքն նշանակելին զշարժումն խաղաղութեան աշխարհի ի խոռվութիւն նիգակաւոր թշնամեաց. որպէս եւ եղիւ իսկ ի գալ թուականին ի վեցհարիւր վաթսուսն եւ իննն»¹⁶: Այստեղ խօսքը Հայոց 669 թուին նախորդող տարուայ մասին է: Դա Հայոց 668 թիւն է: Ըստ Վարդանի հէնց այդ տարում են եղել Մշկավանքի (Մշակավանքի) աւերումը երկրաշարժից Յունուարի 11-ին եւ գիսաւորի երեւալը: Հայոց 668 թիւը պիտի համապատասխանի Փրկչ. 668+551=1219 թուին: Մ. Բարդէի գիսաւորներէրի ցուցակում Փրկչ. 1219 թ. յետէ գիսաւորի երեւալու մասին տեղեկութիւն չկայ¹⁷: Այսինքն, կամ սա վկայութիւն է տակաւին անյայտ մի գիսաւորի մասին, եւ կամ գիսաւորի տարեթիւն է սխալ տրուած Վարդանի պատմութեան մէջ: Նախ փորձենք ստուգել տարեթիւը: Վարդանի երկում գիսաւորի ժամանակը տրուած է երկու իրադարձութիւններէրի ժամանակներէրի համեմատութեամբ. Կոստանդին կաթողիկոսի աթոռակալութեամբ եւ Մշկավանքն աւերած երկրաշարժի միջոցով:

Կոստանդին կաթողիկոսի (խօսքը Կոստանդին Բարձրաբերդցու մասին է) աթոռակալութեան սկիզբը Սամուէլ Անեցու պատմութեան մէջ դրուած է Հայոց ՈԿԹ(669) թուին¹⁸: Նոյնն է տալիս նաեւ Առաքել Դաւրիժեցին¹⁹: Նոյն Հայոց ՈԿԹ թիւն է տալիս նաեւ Դաւիթ Բաղիշեցին²⁰, իսկ Անանուս Սեբաստացին տալիս է նրա մահուան տարին Հայոց ԻՃԺՁ(716) թիւը²¹. սրանից հանելով նրա աթոռակալման 47 տարիները, դարձեալ կը ստանանք Հայոց 669 թիւը: Սրան ներդաշնակ են նաեւ Կիրակոս Գանձակեցու տուեալները, որ, թէպէտ չի տալիս ուղղակի թուական տուեալներ Կոստանդին կաթողիկոսի աթոռակալման մասին,

¹⁶ Վ.ԱՐԴԱՆ ԱՐԵՒԵԼՅԻ, Հաւաքումն Պատմութեան Վարդանայ վարդապետի, Երեւանի Համալսարանի հրատ., Երեւան, 2001, ԶԳ, էջ 144:

¹⁷ M. F. Baldet, Liste Générale des Comètes de L'Origine à, 1948, annuaire de Bureau de Longitudes, Paris, 1950, p. B.

¹⁸ Սամուէլի Բախանայի Անեցոյ Հաւաքումն ի գրոց պատմագրաց, յառաջաբանով, համեմատութեամբ, յաւելուածներով եւ ծանօթութիւններով Արշակ Տէր-Միքիլեանի, Վաղարշապատ, Ս. Էջմիածնի Տպարան, 1893, էջ 148:

¹⁹ ԱՌԱՔԵԼ ԴԱՒԻՐԺԵՑԻ, Գիրք պատմութեանց, ՀԻՍՉ ԳԱ հրատ., Երեւան, 1980, էջ 341:

²⁰ Տէ՛ս Մանր ժամանակագրութիւններ, կազմեց Վ. Ա. ՅԱՎՈՐԵԱՆ, հ. 2, ՀՍՄՀ ԳԱ հրատ., Երեւան, 1956, էջ 344:

²¹ Անդ, էջ 145:

սակայն նրա այլ համաժամանակեայ տուեալներինց եւս հետեւում է, որ տ. Կոստանդինի կաթողիկոսութեան սկիզբը պիտի լինի Հայոց 669-ին²²: Այսինքն, Կոստանդին Բարձրաբերդցու կաթողիկոսութեան սկիզբը ըստ քննարկուած բոլոր աղբիւրների Հայոց 669 թիւն է, որով եւ գիտաւորի ժամանակը լինում է դրանինց մէկով պակաս՝ Հայոց 668 թիւը: Սա համապատասխանում է 668+551=Փրկչ. 1219 թուին:

Այս նոյն գիտաւորի մասին է նաեւ Ստեփանոս եպիսկոպոսի տարեգրութեան մէջ եղած նշումը. «Ոկիթ՝ քուին ագելոր աստղն ելաւ եւ զքաթարն վրացին կոտորեաց ի կոռմանու ջրին»²³: Այս վկայութեանն անդրադարձել է Բ. Թումանեանը, որ, սակայն, հիմք ընդունելով սկզբնաղբիւրում տրուած Քրիստոսի ծննդեան 1222 թիւը, սա նոյնացրել է Փ. 1222 թ. Սեպտեմբերի 15-ին երեւացած գիտաւորի հետ²⁴: Թէպէտ առկայ է տարեթուերի բացարձակ «գուգադիպութիւն», այդուհանդերձ դա թուացեալ է եւ այս նոյնացումը ընդունելի լինել չի կարող: Բանն այն է, որ այս Փ. 1222-ը ոչ մի կերպ չի ներդաշնակում Հայոց 669 (Ոկիթ)-ին, որ կարող է լինել Փ. 1220, կամ 1221, բայց ոչ բնաւ 1222: Եւ, բացի այդ էլ, ինչպէս յայտնի է, հայ մատենագրութեան մէջ կիրառուող Քրիստոսի ծննդեան թուականը երկու-երեք (երբեմն՝ նաեւ աւելի) տարով տարբեր է (մեծ է) ներկայումս կիրառուող Փրկչական թուականին²⁵: Այսպիսի նոյնացման դէմ է նաեւ ամիսների անհամաձայնութիւնը. վարդանը նշում է, որ գիտաւորն երեւում էր Յունուարին, իսկ Թումանեանի նոյնացրած գիտաւորը երեւացել է Սեպտեմբերին:

Վարդանի եւ Ստեփանոսի տեղեկութիւնները միեւնոյն գիտաւորին վերաբերելու խնդրում տարակոյսի տեղիք կարող է տալ միայն այն, որ վարդան Արեւելցու մօտ գիտաւորը Հայոց

²² ԿԻՐԱԿՈՄ ԳԱՆՁԱԿԵՑԻ, Պատմութիւն Հայոց, աշխատասիր. Կ. Ա. Մելիք-Օհանջանեանի, ՀՍՍԳ ԳԱ հրատ., Երեւան, 1961, էջ 187-191:

²³ Մանր ժամանակագրութիւններ, կազմեց Վ. Ա. ՅԱԿՈԲԵԱՆ, հ. 1, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1951, էջ 38:

²⁴ Բ. Ե. ԹՈՒՄԱՆԵԱՆ, Հայ աստղագիտութեան պատմութիւն (XIX դ. սկզբից մինչեւ 1920 թ.), «Միտք», Երեւան, 1968, էջ 216:

²⁵ Հայկական աղբիւրներում Քրիստոսի ծննդը համարուել է Փրկչական թուականի սկզբից առաջ՝ Տե՛ս ԳԲ. ԲԲՈՒՏԵԱՆ, Քրիստոսի ծննդեան բուականը ըստ Հայ մատենագրական աւանդոյթի, «էջմիածին», Ե, 1998, էջ 73-88:

668-ին է, իսկ Ստեփանոսի մօտ՝ Հայոց 669-ին: Այս տարբերությունը, սակայն, դիւրաւ յաղթահարելի է: Բանն այն է, որ Վարդանի երկում պատմում է, թէ Յունուարի 11-ին երկրաշարժ է եղել եւ ապա աւելում է, որ այդ ժամանակ ամէն գիշեր երեւում էր գիսաւորը: Այսինքն, նշուած է գիսաւորի դիտուելու ժամանակամիջոցի մի հատուածը միայն. չի տրուած յայտնուելու պահը եւ երեւալու տեւողութիւնը: Հայոց 669 թիւն էլ պիտի սկսուած լինի կամ Փ. 1220 թ. Յունուարի 26 = Նաւասարդի 1-ով (եթէ Հայոց թուականի տարիները հաշուենք ըստ Աթանաս Տարօնացու սահմանածի), կամ էլ Փ. 1221 թ. Յունուարի 6 = Հրոտից 17-ով (եթէ Հայոց թուականի տարիները հաշուենք ըստ Անանիա Շիրակունու բարեփոխածի): Վարդանը համարում է, որ երկրաշարժն ու գիսաւորը «նշանակում էին, որ աշխարհի խաղաղութիւնը խախտուելու է նիզակաւոր թշնամիների կողմից, որը եւ տեղի ունեցաւ 669 թուականի գալով» (ընդգծումը - Գ. Բ.): Այսինքն, ըստ նրա, Հայոց 669-ը սկսուել է Յունուարի 11-ից յետոյ: Ուրեմն, նա Հայոց թուականը հաշուել է ըստ Աթանասի՝ Նաւասարդի 1-ով սկսուող շարժական տարիներով: Եւ, ըստ այսմ, նրա նշած երկրաշարժն եղել է Փ. 1220 թ. Յունուարի 11-ին, եւ այդ ժամանակ էլ երեւում էր գիսաւորը: Իսկ դրան յաջորդող Յունուարի 26-ից սկսուել է Հայոց 669 թիւը: Եւ, բնական է, որ Յունուարի 11-ին երեւացող գիսաւորը կարող էր դիտուել նաեւ դրանից քիչ անց՝ Յունուարի 26-ին (որ, սակայն, արդէն ընկնում է Հայոց թուականի յաջորդ՝ 669 տարուայ մէջ):

Թերեւս այս նոյն գիսաւորի մասին է նաեւ Մխիթար Այրիվանեցու տեղեկութիւնը. «Աստղ մի նիզակաձեւ երեւեցաւ»²⁶: Այրիվանեցու երկում սա զրուած է Զաքարէի մահից անմիջա-

²⁶ Մխիթ. Ա. ԱՅՐԻՎԱՆԵՑԻ, էջ 65: Այրիվանեցու այս տեղեկութիւնը քննարկել է եւ Բ. Ե. Թումանեանը (շայ աստղագիտութեան պատմութիւն, XIX դ. սկզբից մինչեւ 1920 թ., «Միտք», Երեւան, 1968, էջ 215): Սակայն, հիմք ընդունելով սրանից վեր Այրիվանեցու երկում գրուած 1211-ը Թումանեանը սա նոյնացրել է Փ. 1211 թ. Մայիսին երեւացած գիսաւորի հետ: Միեւնոյն ժամանակ, այս նոյնացումը զժուար է ճիշդ համարել, քանի որ այս գիսաւորի մասին յիշատակութիւնից առաջ Այրիվանեցու երկում նշուած է Զաքարէի մահը, որ եղել է Փ. 1212-ին, այսինքն, սոյն գիսաւորը պիտի եղած լինի Փ. 1212-ից ոչ շուտ: Ի դէպ, Բ. Թումանեանը եւս նկատել է, որ գիսաւորի իր այս նոյնացումը այնքան էլ յուսալի չէ, եւ նշել է, որ հայկական հաշուով Քրիստոսի 1211-ը պիտի լինէր Փրկչ. 1209 թ.:

պէս յետոյ Քրիստոսի ծննդեան 1211-ից յետոյ եւ 1221-ից առաջ: Չաբարէն մահացել է Փ. 1212-ին, որով այս գիսաւորը պիտի եղած լինի 1212-ից յետոյ:

Այսպիսով, ըստ մեր մատենագիրների տեղեկութիւնների վերլուծութեան, խնդրոյ առարկայ գիսաւորը դիտուել է Փ. 1220 թ. Յունուարին (գուցէ եւ զրանից առաջ եւ յետոյ): Վստահաբար այն յայտնուել է Յունուարի 11-ից ոչ ուշ եւ անյայտացել է Յունուարի 26-ից ոչ շուտ:

Ըստ Գ. Կրոնկի կազմած գիսաւորների ամենանոր համահաւաք ցուցակի Փ. 1220 թ. իրօք, դիտուել է գիսաւոր: Ըստ ճապոնական աղբիւրների 1220 թ. Յունուարի 25-ին երեւացել է կարմիր «աւելի նման աստղ» հիւսիս-արեւմուտքում (i, κ, λ եւ 7 Անդրամեդայի եւ α, β, 5 եւ 11 Մոդէսի տարածքում): Ըստ կորեական աղբիւրների «աւելի նման աստղը» երեւացել է 1220 թ. Փետրուարի 6-ին երկնքի հիւսիսային կողմում (α, η, θ, ι, ο, ξ, 4 եւ 26 Կեփեոսի աստղերի տարածքում): Գէսը ձգուել է 3^o դէպի հիւսիս-արեւմուտք²⁷: Ըստ ժամանակի, այս տեղեկութիւններից առաջինը լրիւ համընկնում է մեր խնդրոյ առարկայ գիսաւորին: (Ինչպէս նշում է Գ. Կրոնկը, չի բացառում, որ սրա հետ նոյնական լինի նաեւ այդ նոյն տարուայ Փետրուարին Կեփեոսում գիտուած գիսաւորը): Այսպէս թէ այնպէս, հայկական աղբիւրների տեղեկութիւններով յայտնի այս գիսաւորը ժամանակով նոյնական է 1220 թ. Յունուարի 25-ին ճապոնացիների դիտածի հետ: Հայկական աղբիւրները լրացուցիչ, այլուստ անյայտ տեղեկութիւն են պարունակում այս գիսաւորի մասին: Հայկական աղբիւրների տեղեկութիւններով ճշգրտում է այս գիսաւորի երեւալու տեւողութիւնը: Այն երեւացել է 1220 թ. Յունուարի 11-ից ոչ ուշ եւ անյայտացել է Յունուարի 26-ից ոչ շուտ, այսինքն, Հայաստանի տարածքից դիտելի է եղել առնուազն 16 օր²⁸:

ԳՐԻԳՈՐ ԲՐՈՒՏԵԱՆ*

²⁷ G. W. Kronk, *Cometography. A Catalog of Comets*, vol. 1, Ancient – 1799, Cambridge University Press, 1999, p. 208-209.

²⁸ Յատուկ շնորհակալութիւնս եմ յայտնում Անահիտ Շիրինեանին, որ ձեռք բերեց եւ ինձ նուիրեց այս աշխատանքիս համար անհրաժեշտ մեծարժէք գրականութիւնը. առանց դրանց աշխատանքս էապէս թերի կը լինէր:

* ՀՀ ԳԱԱ վիկտոր Համբարձումեանի Տուն-Թանգարան, գ. Բիւրական, Արաբստանի մարզ, 0213, ՀՀ, էլ. հասցէ՝ gbroun@mail.ru

**New evidences about comets
in Armenian medieval literary sources**

GRIGOR BROUTIAN*

(summary)

In the chronological work of Anania Shirakouni (Shirakatsi) there are some data concerning the appearance of the comet of A.D. 467. We learn from this source that this comet became visible in February, was visible during 40 days and had the shape of a trumpet.

Another notation of a comet appearance we find in the historical work of Vardan Areweltsi. It concerns the comet of A.D. 1220. Vardan's History gives us additional information concerning this comet unknown from other sources. We learn from this source that this comet has appeared not later than January 11, has disappeared not earlier, than January 26 and was visible at least 16 days.

* Byurakan Astrophysical Observatory of NAS RA and Viktor Ambartsumian House-Museum, Byurakan, Aragatsotn district, 0213, Armenia, E.mail: vhm@sci.am, gbROUT@mail.ru